Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Արագացնել աշխատանքը

Դուք պատկերացնո՞ւմ եք, որ վերականգնված Եկեղեցին 98 տարեկան էր, երբ ուներ 100 ցից: Բայց, ավելի քիչ, քան 30 տարի անց, Եկեղեցին կազմավորեց իր երկրորդ 100 ցցերը: Եվ դրանից միայն ութ տարի անց Եկեղեցին ուներ ավելի քան 300 ցից: Այսօր մենք ունենք ավելի քան 3000 ամուր ցից:

Ինչո՞ւ է այս աճը տեղի ունենում արագացված տեմպով: Արդյոք այն պատճառով, որ մեզ ավելի լա՞վ են ճանաչում: Այն պատճառով, որ մենք ունենք հրաշալի հավաքատնե՞ր:

Այս բաները կարևոր են, բայց պատճառը, որ Եկեղեցին այսօր գնալով աճում է, այն է, որ Տերը նշել է այդ մասին: Վարդապետություն և Ուխտերում Նա ասել է. «Ահա, ես կարագացնեմ իմ աշխտանքն իր ժամանակին»: [1]

Մենք՝ որպես մեր Երկնային Հոր հոգևոր զավակներ, ուղարկվել ենք երկիր այս ժամանակահատվածում, որպեսզի մասնակցենք այս հիանալի աշխատանքի արագացմանը:

Որքանով ինձ հայտնի է Տերը երբեք չի նշել, որ Իր աշխատանքը սահմանափակվում է մահկանացու կյանքով: Փոխարենը, Նրա աշխատանքն ընդգրկում է հավերժությունը: Ես հավատում եմ, որ Նա արագացնում է Իր աշխատանքը հոգևոր աշխարհում: Ես նաև հավատում եմ, որ Տերն Իր ծառաների միջոցով, ովքեր գտնվում են այնտեղ, նախապատրաստում է շատ հոգիների, որպեսզի նրանք ընդունեն ավետարանը: Մեր աշխատանքն է գտնել մեր մահացածներին և այնուհետև գնալ տաճար ու կատարել այն սրբազան արարողությունները, որոնք վարագույրից այն կողմ գտնվողներին կտան նույն հնարավորությունները, որ մենք ունենք:

Յուրաքանչյուր լավ Վերջին Օրերի Սուրբ զբաղված է հոգևոր աշխարհում, ինչպես ասել է Նախագահ Բրիգամ Յանգը (1801–77): «Ի՞նչ են անում նրանք այնտեղ: Նրանք քարոզում ու քարոզում են այդ ողջ ընթացքում և նախապատրաստում են ուղի մեզ համար, որպեսզի արագացնենք մեր աշխատանքը՝ կառուցելով տաճարներ այստեղ ու այլուր»: [2]

Ընտանեկան պատմության աշխատանքն այժմ դյուրին չէ: Ովքեր Սկանդինավիայից են, ես հասկանում եմ նրանց հուսահատությունը: Օրինակ, իմ Շվեդական կողմում, իմ պապիկի անունը Նելս Մոնսոն էր; իր հոր անունն ամենևին էլ Մոնսոն չի եղել, այլ եղել է Մոնս Օքսեն: Մոնսի հոր անունը Օք Փիդերսոն է եղել, իսկ նրա հոր անունը Փիթեր Մոնսոն՝ նորից ետ դեպի Մոնսոն:

Տերն ակնկալում է ձեզանից ու ինձանից, որ մենք լավ կատարենք ընտանեկան պատմության աշխատանքը: Իմ կարծիքով, առաջին բանը, որ պետք է անենք մեր աշխատանքը լավ կատարելու համար մեր Երկնային Հոր Հոգին մեզ հետ ունենալն է: Երբ մենք ապրում ենք արդարակեցությամբ, ինչպես որ գիտենք, որ պետք է ապրենք, Նա բացում է օրհնությունների իրականացման ճանապարհը, որ մենք այդքան լրջորեն ու ջանասիրաբար փնտրում ենք:

Մենք կկատարենք սխալներ, բայց մեզանից ոչ ոք չի կարող փորձագետ դառնալ ընտանեկան պատմութան մեջ առանց սկսնակ լինելու: Հետևաբար, մենք պետք է խորասուզվենք այս աշխատանքի մեջ և պետք է նախապատրաստվենք վերընթաց բարձրանալուն: Սա հեշտ առաջադրանք չէ, բայց Տերն այն դրել է ձեզ վրա, և Նա դրել է այն ինձ վրա:

Երբ դուք շարունակեք ընտանեկան պատմության աշխատանքը, դուք կտեսնեք, որ ընկնում եք փակուղի, և ինքներդ ձեզ կասեք. «Էլ ոչ մի բան չեմ կարող անել»: Երբ հասնեք դրան, ծնկի իջեք ու խնդրեք Տիրոջը բացել ճանապարհը, և Նա կբացի ճանապարհը ձեզ համար: Ես վկայում եմ, որ սա ճշմարիտ է:

Երկնային Հայրը սիրում է հոգևոր աշխարհում գտնվող Իր զավակներին այնքան, որքան Նա սիրում է ձեզ և ինձ: Մեր մահացածներին փրկելու աշխատանքի վերաբերյալ Մարգարե Ջոզեֆ Սմիթն ասել է. «Եվ այժմ, երբ Աստծո մեծ նպատակներն արագորեն իրականանում են, և մարգարեների կողմից խոսված բաները կատարվում, երբ Աստծո արքայությունը հաստատվում է երկրի վրա և հնադարյան բաների կարգը վերականգնվում, Տերը մեզ ցույց է տալիս այս պարտականությունն ու արտոնությունը»:[3]

Մեր նախնիների վերաբերյալ, ովքեր մահացել են ավետարանի մասին գիտելիք չունենալով, Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը (1838–1918) հայտնել է. «Հանուն նրանց մեր գործադրած ջանքերի միջոցով իրենց գերության շղթաները կընկնեն, և նրանց շրջափակող խավարը կցրվի, որպեսզի լույսը շողա նրանց վրա, և նրանք կլսեն հոգևոր աշխարհում այն աշխատանքի մասին, որը կատարվել է այստեղ նրանց համար իրենց երեխաների միջոցով, և կուրախանան ձեզ հետ, երբ դուք կատարեք այս պարտականությունը»: [4]

Մեր Երկնային Հայրն ունի միլիոնավոր հոգևոր զավակներ, ովքեր երբեք չեն լսել Քրիստոսի անունը նախքան մահանալն ու հոգևոր աշխարհ գնալը: Բայց այժմ նրանց ուսուցանվել է ավետարանը, և նրանք սպասում են այն օրվան, երբ դուք և ես կկատարենք ճանապարհ բացելու համար անհրաժեշտ ուսումնասիրությունը, որպեսզի մենք կարողանանք գնալ Տիրոջ տուն և կատարենք նրանց համար այն աշխատանքը, որ նրանք իրենց համար չեն կարող կատարել:

Իմ եղբայրներ և քույրեր, ես վկայում եմ, որ Տերը կօրհնի մեզ, երբ մենք ընդունենք ու արձագանքենք այս կոչին:

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

Մտածեք մի սիրված պատմության մասին ձեր ընտանեկան պատմությունից և կիսվեք այս պատմությունով նրանց հետ, ում դուք այցելում եք: Դուք կարող եք կիրառել Առաջին Նախագահության Ուղերձի մանկական բաժնի հարցերը (էջ 6), որպեսզի նրանց, ում այցելում եք, խրախուսեք կիսվել իրենց պատմություններով: Կարող եք կարդալ Վարդապետություն և Ուխտեր 128.15 և քննարկել մեր նախնիների համար կատարվող տաճարային արարողությունների կարևորությունը:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 88.73:
2. *Teachings of Presidents of the Church: Brigham Young* (1997), 280.
3. *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 409:
4. *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Ֆ. Սմիթ* (1998), 247:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Կարո՞ղ եմ կատարել ինդեքսավորում:

Էմմա Էբրիլ Տոլեդո Սիսներոս

Ես մասնակցել եմ 50,000 անուն ինդեքսավորելու մերցցի նպատակի իրականացմանը: Սկզբում դժվար էր: Մի քանի անգամ իմ ներբեռնած փաթեթն ուներ դժվար ընթեռնելի ձեռագիր, և երբեմն ես ուզում էի ետ վերադարձնել այն և ներբեռնել ուրիշը: Բայց այնուհետև ես հասկացա, որ եթե բոլորն այդ կերպ մտածեին, այդ փաթեթները կմնային մինչև վերջ: Ես պատկերացնում էի հոգևոր աշխարհում սպասող մարդկանց շատ հերթեր և որոշեցի շարունակել փորձել այդ անունները կարդալ ու արտագրել դրանք առանց սխալ անելու:

Ես սովորեցի սիրել այդ մարդկանց: Ես հասկացա, որ նրանք իսկապես ունեին օգնության կարիք, և մենք նույնպես օգնության կարիք ունեինք նրանցից: Ես ավելի լավ հասկացա, որ Երկնային Հոր կատարյալ ծրագիրը բոլորին պահում է ուշադրության ներքո: Երբ մենք հետևում ենք Նրա ընտրյալ ղեկավարների ոգեշնչումներին ու առաջնորդություններին, մենք ականատես ենք լինում Նրա ողորմությանն ու անվերջ սիրուն:

Ինդեքսավորումը եղել է հրաշալի փորձառություն ինձ համար: Ես սովորեցի ընտանեկան պատմության հետ կապված շատ բաներ գնահատել և սիրել: Ես նաև Տիրոջից ստացա թանկագին պարգևներ՝ հնազանդվելով անել մի այնպիսի պարզ բան, որն է ինդեքսավորմանը մասնակցելը:

Հեղինակն ապրում է Վերակրուզում, Մեխիկո:

Իմացեք ձեր պատմությունը

Ձեր ծնողները և տատիկներն ու պապիկներն ունեցել են շատ արկածներ, մի քանիսի մասին դուք նույնիսկ չգիտեք: Նրանց պատմություններից մի քանիսը ձեզ ծիծաղ են պատճառում,և դրանք կարող են օգնել ձեզ ունենալ հավատք առ Երկնային Հայր: Բայց նույնիսկ մեծահասակներերն են երբեմն ամաչում: Օգտագործեք այս հարցերը, որպեսզի օգնեք նրանց հիշել իրենց սիրած պատմություններից մի քանիսը և գրի առեք կամ իրենց պատասխանների համաձայն նկար նկարեք:

1. Պատմեք ինձ ձեր երեք ամենաուրախ հիշողություն-ների մասին:
2. Ո՞րն էր ձեզ առավել շփոթեցնող պահը:
3. Պատմեք ինձ այն օրվա մասին, երբ ես ծնվեցի:
4. Երեխա ժամանակ ի՞նչ էիք սիրում անել:
5. Ինչպե՞ս ստացաք ավետարանի մասին ձեր վկայությունը:

© 2014 Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են:
Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/14: Թարգմանության հաստատումը. 6/14: *First Presidency Message, June 2014*. Armenian.-ի թարգմանությունը 10866 201

Հիսուս Քրիստոսի աստվածային առաքելությունը. Ծառայող

Աղոթքով ուսումնասիրեք այս նյութը և ձգտեք հասկանալ, թե ինչով կիսվել: Ինչպե՞ս կարող է Փրկչի կյանքի ու առաքելության մասին հասկացողությունը մեծացնել ձեր հավատքը Նրա նկատմամբ և օրինել նրանց, ում մասին հոգ եք տանում այցելությամբ ուսուցանման միջոցով: Լրացուցիչ տեղեկության համար, այցելեք reliefsociety.lds.org:

Հավատք, Ընտանիք, Սփոփանք

Սա Այցելող Ուսուցիչների Ուղերձների այն շարքից է, որը նվիրված է Փրկչի առաքելության տարբեր ոլորտներին:

Երբ մենք ծառայում ենք ուրիշներին, մենք դառնում ենք Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդները, ով օրինակ է սահմանել մեզ համար: Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ասել է. «Մենք շրջապատված ենք նրանցով, ովքեր կարիքի մեջ են:. . . Մենք Տիրոջ ձեռքերն ենք այստեղ՝ երկրի վրա՝ պարտավորված լինելով ծառայել և բարձրացնել Իր զավակներին»:[1]

Լինդա Կ. Բըրթընը՝ Սփոփող Միության Գերագույն Նախագահն ուսուցանել է. «Սակայն փորձ ձեռք բերելու հետ մեկտեղ յուրաքանչյուրս ավելի է նմանվում Փրկչին, ծառայելով Աստծո զավակներին: Որպեսզի մենք ավելի շատ [սիրենք] միմյանց, ես կառաջարկեմ հիշել չորս բառ. «Նախ նկատեք, ապա ծառայեք»:. . . Եթե մենք այդպես ենք անում, մենք պահում ենք պատվիրանները և մեր ծառայությունը, ինչպես Նախագահ Մոնսոնի ծառայությունը, կլինի մեր աշակերտ լինելու ապացույցը»:[2]

Մենք կարող ենք աղոթել ամեն առավոտ, որպեսզի նկատենք ուրիշներին ծառայելու հնարավորությունները: «Երկնային Հայրը կառաջնորդի ձեզ, և հրեշտակները կօգնեն ձեզ»- ասել է Դեյվիդ Լ. Բեքը՝ Երիտասարդ Տղամարդկանց Գերագույն Նախագահը: «Ձեզ կտրվի զորություն, որպեսզի օրհնեք կյանքեր ու փրկեք հոգիներ»:[3]

Սուրբ գրություններից

Մատթեոս 20.25–28; 1 Նեփի 11.27–28; 3 Նեփի 28.18

Մեր պատմությունից

1856թ. հոկտեմբերի գերագույն համաժողովի ժամանակ Նախագահ Բրիգամ Յանգը (1801–77) հայտարարեց, որ ձեռնասայլակով պիոներները դեռ անցնում են տափաստաններով, և որ բոլորը պետք է անմիջապես օգնեն հավաքել պաշար նրանց համար: Լյուսի Միզերվ Սմիթը գրել է, որ կանայք «հանեցին իրենց տակի շրջազգեստը [մեծ ներքնազգեստ], գուլպաները եւ ամեն բան, որ նրանք կարող էին խնայել, և հենց Թաբերնաքլում կիտեցին դրանք սայլակների մեջ»:

Երբ փրկված պիոներները սկսեցին ժամանել Սոլթ Լեյք Սիթի, Լյուսին գրեց. «Ես երբեք . . . ավելի մեծ հաճույք չեմ ստացել որևէ աշխատանքից, որ երբևէ կատարել եմ իմ կյանքում, միաբանության ինչպիսի՜ զգացում էր գերակշռում: Ես միայն պետք է գնայի խանութ և հայտնեի իմ կարիքների մասին. եթե դա հագուստ էր, ապա այն տրվում էր անվճար»:[4]

Նախագահ Ջորջ Ալբերթ Սմիթն (1870–1951) ասել է ուրիշներին ծառայելու վերաբերյալ. «Մեր հավերժական երջանկությունը կլինի այնքան, որքան որ մենք նվիրվում ենք ուրիշներին օգնելուն»:[5]

Խորհեք այս մասին

1. Ինչպե՞ս կարող է աղոթքն առաջնորդել մեզ լինել գործիք Տիրոջ ձեռքերում:

2. Ինչպե՞ս կարող է ուրիշներին սպասավորելն օգնել մեզ պահել մեր ուխտերը:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Թոմաս Ս. Մոնսոն, «Ի՞նչ եմ արել ես այսօր որևէ մեկի համար» *Լիահոնա,* նոյ. 2009, 86:
2. Լինդա Կ. Բըրթըն, «Նախ նկատեք, ապա ծառայեք», *Լիահոնա,* նոյ. 2012, 78, 80.
3. Դեյվիդ Լ. Բեք, «Ծառայելու ձեր սրբազան պարտականությունը», *Լիահոնա,* մայիս 2013, 56:
4. Lucy Meserve Smith, *in Daughters in My Kingdom: The History and Work of Relief Society* (2011), 36–37.
5. George Albert Smith, *in Daughters in My Kingdom,* 77.

© 2014 Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/14: Թարգմանության հաստատումը. 6/14: *Visiting Teaching Message, June 2014.* Armenian.-ի թարգմանությունը 10866 201